ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դ25/08

Քաղ. Երևան 29 օգոստոսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա. Տոնիկյան, Բ.Շ.Վարդանյան, Գ.Հ.Ադամյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. օգոստոսի 29-ի նիստում (արձանագրություն №64/1) քննարկեց E.M.C. Trading Inc. (US) ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է.Նահապետյանի 15.04.08թ ներկայացված՝ E.M.C. Trading Inc. (US) ընկերության IR 873789 միջազգային գրանցմամբ «Michael Antonio» ապրանքային նշանի գրանցման տարածումը ՀՀ-ում մերժելու մասին 16.01.2008թ. կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Ի լրումն իր 2008թ. ապրիլի 15-ի բողոքի բողոքարկողը 29.08.2008թ. բողոքարկման խորհուրդ է ներկայացրել դիմում, տեղեկացնելով, որ E.M.C. Trading Inc. (US) ընկերության «Michael Antonio» (IR873789) ապրանքային նշանի Հայաստանում գործողության տարածումը մերժելու հիմք հանդիսացող «M Michael Antonio» (ՀՀ վկ. դ10096) ապրանքային նշանի սեփականատեր՝ «Կալիֆորնիա պիցցա» ՍՊԸ-ն զիջել է իր դ10096 գրանցմամբ ապրանքային նշանը հայտատու E.M.C. Trading Inc. (US) ընկերությանը, և զիջման պայմանագիրը գրանցվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում:

Ելնելով դրանից բողոքարկողը խնդրել է վերանայել 16.01.2008թ.-ի կրկնական փորձաքննության որոշումը և տարածել «Michael Antonio» ապրանքային նշանի IR873789 միջազգային գրանցման գործողությունը ՀՀ տարածքում 25-րդ դասի ապրանքների համար:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում և ուսումնասիրելով ի հայտ եկած նոր հանգամանքը՝ «M Michael Antonio» (ՀՀ վկ. դ10096) ապրանքային նշանի «Կալիֆորնիա պիցցա» ՍՊԸ-ից E.M.C. Trading Inc. (US) ընկերությանը զիջման պայմանագրի գրանցման փաստը (գրանցում հ.805, 13.08.2008թ.), բողոքարկման խորհուրդը եկավ հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը գտնում է, որ գրանցման ներկայացված E.M.C. Trading Inc. (US) ընկերության «Michael Antonio» (IR 873789) ապրանքային նշանն ու փորձաքննության կողմից

հակադրված «Կալիֆորնիա պիցցա» ՍՊԸ-ին պատկանող «M Michael Antonio» (ՀՀ վկ. դ10096) ապրանքային նշանը իսկապես շփոթելու աստիճան նման են իրար, հետևաբար կրկնական փորձաքննության 2008թ. հունվարի 16-ի որոշումը կայացվել է օրինական հիմքերով: Սակայն հաշվի առնելով նոր երևան եկած հանգամանքը՝ «M Michael Antonio» (ՀՀ վկ. դ10096) ապրանքային նշանի «Կալիֆորնիա պիցցա» ՍՊԸ-ից E.M.C. Trading Inc. (US) ընկերությանը զիջման պայմանագրի գրանցման փաստը (գրանցում հ.805, 13.08.2008թ.), բողոքարկման խորհուրդը համարում է, որ վերացել են «Michael Antonio» (IR 873789) ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետության տարածքի վրա 25-րդ դասի ապրանքերի համար մերժելու հիմքերը:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13 հոդվածով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 68-րդ կետի «ա» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել E.M.C. Trading Inc. (US) ընկերության բողոքը ամբողջությամբ, չեղյալ ճանաչել կրկնական փորձաքննության 2008թ. հունվարի 16-ի որոշումը և «Michael Antonio» (IR 873789) ապրանքային նշանի միջազգային գրանցման գործողությունը տարածել Հայաստանի Հանրապետության տարածքի վրա՝ միջազգային ծանուցման նյութերում նշված ԱԾՄԴ 25-րդ դասի ապրանքների համար՝ E.M.C. Trading Inc. (US) ընկերության անունով:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան